

Համաշխարհային տնտեսության անկումն ավարտվում է, սակայն ճգնաժամի հետեւանքների վերականգնումը տեսական է լինելու:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մուտքը Հայաստանի տնտեսությունն սկիզբ առավ 2008թ. չորրորդ եռամսյակի թողարկման անկմամբ, որի արդյունքում 2002-ից ի վեր երկնիշխ տարեկան միջինը 13.1% աճ արձանագրած մեր տնտեսությունը 2008-ին բավարարվեց ՀՆԱ-ի՝ նախորդ տարվա համեմատ 6.8% աճով, իսկ 2009-ի արդյունքներով՝ ընդհանրապես անկում ապրեց:

Ճգնաժամը Հայաստան էր թափանցել առետրային եւ ֆինանսական հոսքերի շղթայով: Համաշխարհային շուկայում հանքահումքային ապրանքների գների անկումը զգալի սահմանափակեց հանքարդյունաբերությունը՝ երկրի արտահանման գերակշիռ մասն ապահովող ոլորտը: Հիմնական գործընկեր երկրներում, մասնավորապես՝ Ռուսաստանում, տնտեսական անկումը հանգեցրեց արտերկրից ստացվող դրամաների փոխանցումների, աշխատանքային միգրացիայից եկամուտների ու ներդրումների անկման: Արտերկրից Հայաստան վերադարձող աշխատանքային միգրանտները համարյա քիչ են երկրի ներսում եղած գործազուրկների թիվը:

Արդյունքում 1994-ից շարունակական՝ տարեկան միջինը 8.8% աճ ունեցող Հայաստանի տնտեսությունը 2009թ. կրճատվեց 14.4%-ով կամ 3.332 միլիոն ԱՄՆ դոլլարով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն հախորդ տարվա համեմատ նվազեց շուրջ 1000 ԱՄՆ դոլլարով եւ կազմեց 2.7 հազ. ԱՄՆ դոլլար կամ, գնողունակության համարժեքով ճշգրտված, 5 հազ. միջազգային դոլլար²:

Համաշխարհային ճգնաժամը լրջորեն վտանգել է Հայաստանում աղքատության կրճատման ասպարեզում վերջին տարիների ձեռքբերումները՝ իրավիճակը վերադարձնելով 2006-07թթ. մակարդակին:

Վերջին տարիների տնտեսական զարգացումները բարենպաստ միջավայր էին ձեւավորել երկրում աղքատության կրճատման համար: Այսպես, 2008թ. 2004-ի համեմատ կրկնակի կրճատվել էր ծայրահեղ աղքատության մակարդակը՝ կազմելով 3.1%, իսկ աղքատության ընդհանուր մակարդակը նվազել էր 11.1 տոկոսային կետով եւ կազմել 23.5%: Բարելավվել էին աղքատության խորությունն ու սրությունը. աղքատության խորությունը կազմել էր 3.1%, իսկ սրությունը՝ 0.8%՝ 2004թ. համապատասխանաբար 7.4%-ի եւ 2.4%-ի համեմատ (տես՝ աղյուսակ 1): Այլ էր պատկերը բնակչության բեռնաջանող հաղթահարելու ասպարեզում: Հայաստանում ըստ եկամուտների բեռնաջանումն ավելի խոր է՝ սպառման ցուցանիշի համեմատ, եւ դատելով Ջինիի գործակցի վարքագծից՝ 2008թ. 2004-ի համեմատ ըստ եկամուտների անհավասարությունը նվազել էր ընդամենը 0.006, իսկ ըստ սպառման ցուցանիշի այն ընդհանրապես աճել էր 0.012 կետով՝ կազմելով համապատասխանաբար 0.389 եւ 0.272: Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, միայն 2005 թվականին է, որ տնտեսական աճը զու-

գործվել է բնակչության անհավասարության ցուցանիշների բարելավմամբ, եւ աղքատության կրճատման իմաստով այդ գործոնները եղել են համուղղված: Մյուս կողմից՝ ամբողջ 2004-08թթ. դրությամբ բնակչության բեռնաջանման աստիճանի գրեթե անփոփոխ լինելը հուշում է, որ դիտարկվող ժամանակահատվածում որպես աղքատության կրճատման հիմնական գործոն արժե դիտարկել տնտեսական աճը:

Ներկայում բազմաթիվ հետազոտություններ հիմնավորել են, որ տնտեսական աճը նպաստում է աղքատության կրճատմանը, սակայն ազդեցության չափի վերաբերյալ միասնական իշխող կարծիք առայժմ չկա³, ընդ որում՝ տնտեսական աճի եւ աղքատության միջեւ կապը ոչ գծային է:

Պարզելու համար, թե որքան արդյունավետ է տնտեսական աճը նպաստում աղքատության կրճատմանը, հաճախ կիրառվում է աճի նկատմամբ աղքատության ճկունության գործակիցը⁴: Այն ցույց է տալիս աղքատության մակարդակի տոկոսային փոփոխությունը՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի (կամ եկամտի, ծախսերի) միավոր տոկոսային փոփոխության նկատմամբ:

Էկոնոմետրիկ մոդելավորման, մասնավորապես՝ ռեգրեսիոն վերլուծության մեթոդի կիրառումը թույլ կտա գնահատել աճի նկատմամբ աղքատության ճկունության գործակիցը՝ հետեւյալ մոդելի օգնությամբ.

$$\log(POV) = \beta_0 + \beta_1 \cdot \log(GDP_PERCAP) + \varepsilon$$

որտեղ POV - աղքատության մակարդակն է (%), GDP_PERCAP - մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն (մլրդ դրամ, 2004թ. գներով), ε - մոդելի սխալը, իսկ β_0 եւ β_1 -ը մոդելի անհայտ պարամետրերն են:

Մոդելի՝ փոքրագույն քառակուսիների եղանակով գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Գնահատված մոդելն ունի բավական լավ բնութագրիչներ, մասնավորապես՝ գործոնները առաձին վերցված նշանակալի են, եւ ռեգրեսիան ընդհանուր առմամբ նույնպես նշանակալի է: Լրացուցիչ թեստերով հիմնավորվում է, որ մոդելը հոմոսկեդաստիկ է, եւ մնացորդներում բացակայում է ցանկացած կարգի ավտոկորելյացիան: Մոդելի հիման վրա հաշվարկված աճի նկատմամբ աղքատության ճկունության գործակիցը վկայում է, որ 2004-08թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճի յուրաքանչյուր տոկոսը հանգեցրել է աղքատության ընդհանուր մակարդակի 0.84% նվազման:

Աճի նկատմամբ աղքատության ճկունության գործակիցը, տարածված լինելով հանդերձ, զերծ է թերություններից.

- Եթե աղքատության մակարդակը ցածր է, ապա դրա մեծ տոկոսային փոփոխությունները հեշտ հասանելի են, որոնք, սակայն, միայն մասամբ են բնութագրում աղքատության կրճատման իրական ծավալները: Այսպես, աղքատության մակարդակի նվազումը 2%-ից 1%-ի, ինչպես եւ 60%-ից 30%-ի նշանակում է աղքատության 50%-ով կրճատ-

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԱՄԱՆԻՍԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺՄԱՄԻ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ելենա ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՀԴՏՀ
 մաթ. մեթոդների
 եւ մոդելավորման
 ամբիոնի
 ասիստենտ,
 տնտեսագիտության
 թեկնածու



Աղյուսակ 1.
Աղքատության հիմնական ցուցանիշները 2004-2008թթ.*

	2004	2005	2006	2007	2008
Տնտեսական աճը (%)	10.5	13.9	13.2	13.7	6.8
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճը (%)	10.3	13.7	13.1	13.6	6.5
Աղքատության մակարդակը (%)	34.6	29.8	26.5	25.0	23.5
Ծայրահեղ աղքատության մակարդակը (%)	6.4	4.6	4.1	3.8	3.1
Աղքատության խորությունը (%)	7.4	5.4	3.8	4.9	3.1
Աղքատության սրությունը (%)	2.4	1.6	1.1	1.5	0.8
Ջինիի գործակիցը ըստ					
եկամուտների անհավասարության	0.395	0.359	0.369	0.371	0.389
սպառման անհավասարության	0.260	0.257	0.263	0.288	0.272

*Աղբյուրը՝ ԳՀ ԱՎԾ

Մոդելի գնահատման արդյունքները* Աղյուսակ 2.

Կախյալ փոփոխականը՝ log(POV)

Եղանակը՝ փոքրագույն քառակուսիներ: Ընտրանքը՝ 2004-2008, 5 դիտարկում

Փոփոխական	Գործակից	Ստ. սխալ	Է-վիճակագր.	P-արժեք
C	14.69	1.02	14.38	0.0007
log(GDP_PERCAP)	-0.84	0.08	-11.13	0.0016
R ²	0.98	Ռեգր. ստանդարտ սխալ		0.0273
R ² ուղղված	0.97	F-վիճակագրություն		123.904
DW -վիճակագրություն	1.95	P-արժեք (F-վիճ.)		0.0016

*Աղբյուրը՝ ԳՀ ԱՎԾ, հեղինակի հաշվարկներ, Eviews 4.0 ծրագրային փաթեթ

Աղքատության հիմնական ցուցանիշները 2004-2009թթ. եւ աճի նկատմամբ կիսաճկունության գործակիցները* Աղյուսակ 3.

	2004	2005	2006	2007	2008	2009	2004 - 2008
փաստացի							կիսաճկունության գործակիցներ տոկոսային կետ
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (հազար դրամ, 2004թ. գներով)	593.6	675.2	763.5	867.2	923.8	788.4	
աճի ինդեքս (2004=100%)	100.0	113.7	128.6	146.1	155.6	132.8	
Տնտեսական աճի ինդեքս (2004=100%)	100.0	113.9	128.9	146.6	156.6	134.0	
Աղքատության մակարդակը (%)	34.6	29.8	26.5	25.0	23.5	26.4	-0.20
Քաղաքային բնակավայրերում (%)	36.4	30.7	28.2	24.7	23.8	27.1	-0.23
Մայրաքաղաքում (%)	29.2	23.9	21.0	20.0	19.7	22.2	-0.17
Քաղաքային այլ բնակավայրերում (%)	43.9	37.8	35.8	29.8	28.3	32.4	-0.28
Գյուղական բնակավայրերում (%)	31.7	28.3	23.4	25.5	22.9	25.2	-0.16

*Աղբյուրը՝ ԳՀ ԱՎԾ, հեղինակի հաշվարկներ

Աղքատության մակարդակը ըստ ՀՀ մարզերի 2004-2009թթ. եւ աճի նկատմամբ կիսաճկունության գործակիցները* Աղյուսակ 4.

	2004	2005	2006	2007	2008	2009	2004 - 2008
փաստացի						գնահ.	կիսաճկունության գործակիցներ (տոկոսային կետ)
(%)						(%)	
Աղքատության մակարդակը	34.6	29.8	26.5	25.0	23.5	26.4	-0.20
Երեւան	29.2	23.9	21.0	20.0	19.7	22.2	-0.17
Արագածոտն	35.4	32.3	27.5	22.2	20.7	24.6	-1.9
Արարատ	32.7	30.9	27.0	25.5	24.9	27.0	0.5
Արմավիր	36.0	31.6	30.8	30.7	26.7	29.2	2.7
Գեղարքունիք	41.9	36.8	29.8	29.6	24.8	29.3	2.9
Լոռի	31.3	28.8	27.0	26.8	25.1	26.7	0.3
Կոտայք	39.3	34.5	32.0	30.0	29.5	32.1	5.7
Շիրակ	48.8	42.5	37.3	32.1	30.6	35.4	9.0
Սյունիք	36.5	28.9	25.3	24.0	19.6	24.1	-2.4
Վայոց Ձոր	28.9	19.2	11.4	13.7	16.6	19.8	-6.6
Տավուշ	30.5	25.8	23.5	21.6	19.8	22.6	-3.8

*Աղբյուրը՝ ԳՀ ԱՎԾ, հեղինակի հաշվարկներ

տում, եւ եթե երկու դեպքում էլ ՀՆԱ-ի իրական աճի տեմպերը հավասար են եղել, ապա աղքատության ճկունության գործակիցները կհամընկնեն, այսինչ առաջին դեպքում աղքատության մակարդակի նվազումը կազմում է ընդամենը 1 տոկոսային կետ, իսկ երկրորդ դեպքում այն արդեն 30 տոկոսային կետ է:

● Աճի նկատմամբ աղքատության համամասնական փոփոխությունը չի կարող հաշվարկվել, եթե աղքատության մակարդակը հավասար է գրոյի (ուսումնասիրվող ժամանակահատվածի սկզբին կամ վերջին):

● Կարելի է ցույց տալ, որ շարունակական աճ արձանագրող զարգացող երկրներում աղքատության ճկունության գործակիցն ունի աճի միտում՝ ստեղծելով տնտեսական աճի՝ ժամանակի ընթացքում առավել աղքատամետ դառնալու կեղծ պատկերը⁶:

Աղքատության վրա տնտեսական աճի ազդեցությունը գնահատելու համար առավել նպատակահարմար է աճի նկատմամբ աղքատության կիսաճկունության գործակիցի կիրառումը⁶, որը ցույց է տալիս աղքատության մակարդակի բացարձակ՝ տոկոսային կետով փոփոխությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի (կամ եկամտի, ծախսերի) միավոր տոկոսային փոփոխության նկատմամբ: Կիսաճկունության գործակիցը վկայում է, որ 2004-08թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճի յուրաքանչյուր տոկոսը հանգեցրել է աղքատության ընդհանուր մակարդակի միջինը 0.2 տոկոսային կետով նվազման (տես՝ աղյուսակ 3):

2004-08թթ. համար հաշվարկված կիսաճկունության գործակիցները կիրառվել են 2009թ. աղքատության մակարդակի գնահատման համար:

Գնահատականների համաձայն՝ ճգնաժամի ազդեցության արդյունքում 2009թ. իրականություն դարձած տնտեսական անկման հետեւանքով աղքատության ընդհանուր մակարդակն աճել է 2.9 տոկոսային կետով՝ 2008-ի նկատմամբ եւ կազմել 26.4%:

Այսպիսով՝ ճգնաժամի արդյունքում 2009թ. Հայաստանում աղքատությանը մատուցել է եւս մոտ 100 հազար մարդ:

Քաղաքային բնակավայրերում աղքատությունն աճել է շուրջ 14%-ով՝ կազմելով 27.1%, ընդ որում՝ Երեւանում աղքատության մակարդակը կազմել է 22.2%, իսկ այլ քաղաքային բնակավայրերում՝ 32.4%՝ 2008-ի համեմատ ավելանալով համապատասխանաբար 2.5 եւ 4.1 տոկոսային կետերով: Գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի աճը կազմել է 25.2%: Ընդհանուր առմամբ՝ աղքատության մակարդակը քաղաքային բնակավայրերում (առանց Երեւանի) առաջանցիկ է գյուղական բնակավայրերի նկատմամբ՝ մոտ 7.2 տոկոսային կետով:

Մարզային կտրվածքով 2009թ. աղքատության մակարդակների գնահատման համար կիրառվել են, 2004-2008թթ. փաստացի ցուցանիշների հիման վրա հաշվարկված, աղքատության մարզային կիսաճկունության գործակիցներն ըստ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճի (տես՝ աղյուսակ 4):

Գնահատականների համաձայն՝ 2009թ. աղքատության միջին հանրապետական մակարդակից բարձր են եղել Հայաստանի 11 մարզերից 6-ի՝ Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, Արմավիրի, Արարատի եւ Լոռու մարզերի ցուցանիշները, ընդ որում՝ Շիրակի մարզը շարունակում է մնալ Հայաստանում աղքատության առավել բարձր մակարդակով տարածաշրջանը, որտեղ աղքատության գծից ցածր է բնակչության մոտ 35.4%-ը:

Կիսաճկունության գործակիցների վերլուծությունը փաստում է նաև, որ 2004-08թթ. տնտեսական աճի ազդեցությունը աղքատության կրճատման առումով առավել ուժեղ էր Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի և Արագածոտնի մարզերում, որտեղ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի իրական աճի 1%-ը հանգեցրել է աղքատության մակարդակի միջինը 0.3 տոկոսային կետով կրճատման:

Համաշխարհային տնտեսության վերականգնման ներկա միտումները թույլ են տալիս ակնկալել համախառն պահանջարկի մեծացում, մետաղների միջազգային գների աճ և արտերկրից ստացվող դրամական փոխանցումների՝ 2009-ի համեմատ աճ: Այդ ենթադրությունների ներքո 2010թ. Հայաստանում ակնկալվում է 1.8% տնտեսական աճ⁷, որի պայմաններում սպասվում է աղքատության մինչև 26.1% մակարդակ:

Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի միջևաժամկետ տեսլականը ենթադրում է տնտեսության առավել կայուն կառուցվածքի ձևավորում, որը թեեւ ավելացված արժեքի բարձր աճեր չի արձանագրի, այնուամենայնիվ կլինի առավել առողջ, ընդ որում շինարարության՝ որպես տնտեսական աճի առաջնորդողի դերը կանցնի ծառայությունների ոլորտին:

Ելնելով տնտեսական իրավիճակի զարգացման ՀՀ ՖՆ, ինչպես նաև ԱՄՆ ներկա գնահատականներից՝ 2011-13թթ. սպասվող տնտեսական աճի արագացման պայմաններում 2013թ. Հայաստանին գրեթե կհաջողվի հատել թողարկման և աղքատության մակարդակների նախաճակատային՝ 2008թ. շեմերը: Իսկ դա թերեւս նշանակում է, որ 2010-13թթ. մեզ, լավագույն դեպքում, կհաջողվի վերադառնալ 2008թ. ձեռքբերումներին, որը, երկարաժամկետ հատվածում, Հայաստանի համար մեծ իմաստով տեսանելի որեւէ հեռանկար չի ստեղծում զարգացող / ձեռավորվող շուկայով երկրների խմբից՝ զարգացած տնտեսություն ունեցող երկրի փոխակերպվելու համար:

1. *Stu*՝ ՀՀ ԷՆ, Հայաստանի տնտեսական զեկույց 2009, Եր. 2009

2. Գնողունակության համարժեքն ըստ ԱՄՆ, <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/01/weodata/index.aspx>, հեղինակի հաշվարկներ

3. Dollar D. and A. Kraay (2002), *Growth is Good for the Poor*, The World Bank Development Research Group.

4. Bourguignon Francois (2003), *The Growth Elasticity of Poverty Reduction: Explaining Heterogeneity across Countries and Time Periods*, In T. Eichler and S. Turnovsky (eds.), *Growth and Inequality*, Cambridge, MIT Press.

5. <http://siteresources.worldbank.org/INTPGI/Resources/semi-elasticity.pdf>

6. Klasen S. and M. Misselhorn (2008), *Determinants of the Growth Semi-Elasticity of Poverty Reduction*, EUDN/WP.

7. *Luun* ԱՄՆ՝ *World Economic Outlook Database*, April 2010, <http://www.imf.org/external/pubs/ft/weo/2010/01/index.htm>

Բանկերի վարկային գործառնությունները ճգնաժամի պայմաններում վարկային բարձր ռիսկ են պարունակում, հետեւաբար՝ վարկային ռիսկի կառավարումը համարվում է բանկերի առաջնահերթ խնդիրներից մեկը և վարկային ռազմավարության անհրաժեշտ մասը:

Վարկային ռիսկը սահմանում են որպես վարկառուի կողմից հիմնական պարտքի և վարկային տոկոսների չվճարման ռիսկ կամ վարկային պայմանագրի սկզբնական պայմանների չպահպանման հնարավորություն¹:

Վարկային ռիսկ մեծացնող գործոնները հետեւյալն են.

✓ մեծ քանակությամբ գումար՝ տրամադրված վարկառուների նեղ խմբի կամ ճյուղերի, այսինքն՝ բանկի վարկային գործունեության կենտրոնացում մի ճյուղում, որը զգայուն է տնտեսության փոփոխությունների նկատմամբ,

✓ վարկային գործարքների մեծ տեսակարար կշիռ՝ կապված այն հաճախորդների հետ, ովքեր կրում են ֆինանսական դժվարություններ,

✓ բանկի գործունեության կենտրոնացում նոր, չուսումնասիրված ոլորտներում,

✓ նոր հաճախորդների տեսակարար կշիռ, որոնց մասին բանկը բավարար տեղեկություններ չունի,

✓ վարկային ազատական քաղաքականություն (վարկերի տրամադրում՝ առանց անհրաժեշտ տեղեկատվության առկայության և հաճախորդի ֆինանսական դրության վերլուծության),

✓ վարկի դիմաց համապատասխան ապահովվածություն ստանալու անհնարիություն կամ որպես գրավ այնպիսի արժեքների ընդունում, որոնք շուկայում դժվար իրացվելի են կամ շուտ արժեզրկվող,

✓ տնտեսական ու քաղաքական անկայուն իրադրություն և այլն:

Այսպիսով՝ վարկային ռիսկը կախված է արտաքին (տնտեսական իրադրության հետ կապված) և ներքին (բանկի սխալ գործունեության հետ կապված) գործոններից: Այնուամենայնիվ՝ վարկային ռիսկի կառավարման հիմնական քայլերը բանկի ներքին քաղաքականության ոլորտում են:

Վարկային ռիսկը կառավարվում է վարկային կենսացիկլի բոլոր փուլերում (վարկային քաղաքականության մշակում, հնարավոր վարկառուի հետ սկզբնական աշխատանքներ, բանկի նպատակների և հաճախորդի շահերի համակարգում, հաճախորդի վարկունակության գնահատում, վարկի որակական բնութագրիչների դասակարգում, վարկային մոնիտորինգ, խնդրահարույց վարկերի հետ աշխատանքներ, պատժամիջոցների կիրառում և այլն):

Վարկային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է ռիսկերի կանխատեսումը, դրանց հնարավոր չափերի ու հետեւանքների որոշումը, դրանց հետ կապված կորուստների նվազեցման կամ կանխման համար միջոցառումների մշակումը և իրականացումը: Այս ամենը ենթադրում է յուրաքանչյուր բանկի կողմից ռիսկերի կառավարման սեփական ռազմավարության մշակում և իրականացում:

Ճգնաժամի պայմաններում անհրաժեշտ է իրականացնել վարկային ռիսկի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները, այսինքն՝ բացառել վարկային բարձր ռիսկային գործառնությունները, իրականացնել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիա՝ ապահովելով ռացիոնալ հարաբերակցություն եկամտաբերության և հուսալիության միջև:

Վարկային ռիսկի կառավարման հիմնական եղանակներն են.

● Ռիսկից խուսափում, սակայն վարկային ռիսկից լրիվ խուսափել հնարավոր չէ, քանի որ այդ դեպքում բանկերը պետք է ընդհանրապես վարկեր չտրամադրեն: Բայց առանձին դեպքերում գոյություն ունի հնարավորություն՝ մերժել կոնկրետ հաճախորդի դիմումը և այս ձևով խուսափել հնարավոր ռիսկից,

● Ռիսկի կրճատում.

✓ ռիսկի նախնական գնահատման միջոցով. վարկի և տոկոսների չվճարման հավանականությունը բանկերը փորձում